229

Նաիրացին
Միջազգային հեղափոխական
կարմիր օգնություն

9(Հ)
Ն-23

1929

2011-071

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿ(Բ)Կ ԿԿ-Ի ԱԳԻՏՊՐՈՊ-ԲԱԺՆԻ

# ՆԱԽԱԳԻԾ
# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Առարկայական խմբակների համար)

—

9(ω)
Ն-23

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1929

Ա. Մյասնիկյանի
Անվան
Публичная Библиотека
4964
41

10 JUL 2013

229

Հրատ. № 1088

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրատ. № 2786(բ) Տիրաժ 1000 Պատվեր № 1035

27 JUN 2005

9(Ն)
Ն-23

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Այս ծրագրի հիմքում դրված է ՀամԿ(բ)Կ ԿԿ և Մոսկվայի կոմիտեյի ագիտպրոպ բաժնի 1928/29 ուսումնական տարվա համար մշակած նախագիծը։ Նշում ենք կառուցվածքային հետևյալ հիմնական փոփոխությունները.

1. Մտցված է մի թեմա ֆրանսիական Մեծ հեղափոխության մասին, ըստ որում ամենից ավելի լայն մշակման է յենթարկված թեմայի այն մասը, վորը նվիրված է մանր-բուրժուական դիկտատուրայի շրջանի մասսայական շարժումներին և Հավասարների դավադրությանը։

2. 1848 թ. հեղափոխության թեմային հատուկ տեղ ենք տվել։ Այս թեմայում տրվում է բանվորական և սոցիալիստական շարժման զարգացման բնութագրությունը նախ քան 1848 թիվը, մասնավորապես ուտոպիստական սոցիալիզմը և Մարքս ու Ենգելսի գործունեյությունը, վորոնք բացակայում եյին նախորդ ծրագրում։

3. Արմատական վերամշակման է յենթարկված ծրագրի՝ իմպերիալիզմի շրջանի բանվորական շարժման վերաբերող բաժինը։

Փոխանակ Կենտկոմի և Մոսկվայի կոմիտեյի ծրագրի նշած յերկու պարապմունքի (1-ին—իմպերիալիզմի տնտեսական բնութագրությունը. բանվորական

շարժումը Անգլիայում. 2-րդ—սոցիալ-դեմոկրատիան Գերմանիայում և սինդիկալիզմը Ֆրանսիայում) չենթադրվում է՝

ա) հատուկ գլուխ նվիրել Եվրոպայի հիմնական իմպերիալիստական պետությունների— Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի—էկոնոմիկայի և բանվորական շարժման բնութագրմանը։ Իմպերիալիզմի կարճ ներածական բնութագրությունից բացի՝ այս գլուխներից յուրաքանչյուրում տրվում է սույն երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունների ուրվագիծը.

բ) մտցվում է հատուկ մի գլուխ Միացյալ Նահանգների իմպերիալիզմի շրջանի տնտեսական զարգացման և բանվորական շարժման մասին։

4. Փոխանակ ըստ ծրագրի մեկ թեմայով ծանոթանալու Տաճկաստանի և Հնդկաստանի հետ, վորի հետևանքով չափազանց վատ է ստացվում Հնդկաստանի բնութագրությունը (քննության չի առնվում Հնդկաստանի տնտեսակարգը), ծրագրից հանված է Տաճկաստանին վերաբերող մասը և ամբողջ պարապմունքը նվիրված է Հնդկաստանին, այն նպատակով, վոր նրա—իմպերիալիստական գաղութի այդ կլասիկ տիպի—օրինակով հնարավոր կլինի բացահայտել մետրոպոլիաների քաղաքականությունը, ինչպես նաև (մանրամասն կերպով կանգ առնել ազգային-հեղափոխական շարժման բնույթի և շարժիչ ուժերի վրա մասնավորապես տալ գանդիզմի բնութագրությունը)։



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանվորական շարժման ուսումնասիրության խնդիրներն ու նպատակը։ «Նախընթաց ամբողջ հասարակության պատմությունը դասակարգերի կռվի պատմությունն է» (Մարքս)։ Դասակարգերը և դասակարգային կռիվը մինչև արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանը։ Բուրժուազիան և պրոլետարիատը։ Բանվոր դասակարգի ծագումն ու զարգացումը։

## I ԹԵՄԱ

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխության նախադրյալները—ֆեոդալական և կապիտալիստական հարաբերությունների պայքարը։ Հեղափոխության առաջին շրջանը - խոշոր բուրժուազիայի ղեկավարությունը։ Մոնտանյարների և ժիրոնդիստների պայքարը։

Մանր բուրժուազիայի դիկտատուրան։ Դիկտատուրայի դարաշրջանի մասսայական շարժումները։ Բանվորների դերը Ֆրանսիական Մեծ հեղափոխության մեջ։ Ֆրակցիաների պայքարը և նրա սոցիալական արմատները։ Դեմոկրատիայի ձախ թևը—«կատաղիները», «հեբերտիստները և շոմետիստները»։ Տերմիդորի 9-ի հեղաշրջումը։

Մասսայական ցելույթները տերմիդորից հետո։ «Հավասարների դավադրությունը»։ Բաբյոֆի նշանակությունը։

Միապետական հեղաշրջման նախապատրաստման պայմանները։ Բոնապարտիզմը և նրա շարժիչ ուժերը։ Առաջին կայսրությունը։

## II ԹԵՄԱ

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՅԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

*Արդյունաբերական հեղաշրջման էությունը։ Արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները։ Բանվոր դասակարգի դրությունը և բանվորական շարժումը մինչև չարտիզմը։ Արդյունաբերական բուրժուազիայի պայքարը քաղաքական իշխանության համար։*

*Չարտիզմ։ Շարժման հիմնական էտապները։ Չարտիստների սոցիալ-քաղաքական պահանջները։ Շարժման սոցիալական կազմը, նրա փոփոխությունները։ Հոսանքների պայքարը չարտիզմի մեջ («բարոյական» և «ֆիզիկական» ուժը. ագրարային ծրագիրը և այլն)։ Չարտիզմը պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական շարժումն է։ Պրոլետարական-առաջադիմական և բուրժուական-հետադիմական կողմերը չարտիզմի մեջ։*

## III ԹԵՄԱ

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԱԿՏԻԿԱՆ 1948 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանվորական և սոցիալիստական շարժումը նախքան 1848 թիվը։ Ուտոպիական սոցիալիզմը, նրա իդեոլոգիան և տակտիկան։ Գիտական սոցիալիզմի իդեոլոգիայի մշակումը Մարքսի և Ենգելսի կողմից։*



*«Կոմմունիստների Միություն»։ «Կոմմունիստական Մանիֆեստի» սկզբունքները։*

*Պրոլետարիատը, գյուղացիությունը և բուրժուազիան ֆրանսիական փետրվարյան հեղափոխության ժամանակ։ Լուիբլանիզմ։ Հունիսյան օրերը և հեղափոխության պարտությունը։*

*Մարտյան հեղափոխությունը Գերմանիայում և Ավստրիայում։ Պարտության պատճառները։ Մարքսի տակտիկան հեղափոխության մեջ։ Բանվորական շարժումը Գերմանիայում։ 1848 թ. փորձի հաշվառումը Մարքսի կողմից։*

## IV ԹԵՄԱ

## I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՅԵՎ ՊԱՐԻԶԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ

*Դարաշրջանի սոցիալ-տնտեսական բնութագրությունը։ (Յերկրորդ կայսրությունը, քաղաքացիական կռիվները Միացյալ Նահանգներում, ազգային միացման շարժումը Գերմանիայում և Իտալիայում. Բիսմարկի «իվերուստ հեղաշրջումը»)։ Արդյունաբերական կապիտալիզմի ծագումը և բանվորական շարժման աշխուժացումը Յեվրոպայում։ Առաջին մասսայական կազմակերպությունը Գերմանիայում։ Լասսալիզմը և մարքսիզմը։*

*I Ինտերնացիոնալի ծագումը։ Կազմակերպչական կառուցվածքը։ Միջազգային և գործադուլային շարժումը։ Հոսանքների պայքարն Ինտերնացիոնալի ներսում։ Մարքսի դերն ու նշանակությունը Ինտերնացիոնալում։*

*Պարիզի Կոմմունան։ Նրա ծագման նախադրյալ-*

ները։ Կոմմունան իբրև պրոլետարական դիկտատուրայի ձև։ Նոր տիպի պետության ստեղծումը։ Կոմմունայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը։ Ֆրակցիաների պայքարը Կոմմունայում (յակոբինները, պրուդոնիստները, բլանկիստները)։ Կոմմունայի սխալները։ Մարքսը և Լենինը Պարիզյան Կոմմունայի փորձի մասին։

---

# ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

## V ԹԵՄԱ

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի վերջին էտապ։ Իմպերիալիզմի դարաշրջանի տնտեսական հիմնական առանձնահատկությունները։ Պետությունը և դասակարգերն իմպերիալիզմի դարաշրջանում։ Պարլամենտարիզմի այլասերումը։ Իմպերիալիզմի ազդեցությունը բանվորական շարժման վրա։

Անգլիայի տնտեսական զարգացումը XIX դարի վերջում։ Արդյունաբերական մենաշնորհից զրկվելը։ Ֆինանսական կապիտալի զարգացումը։ Կապիտալի արտահանության նշանակությունը։ Գաղութային տիրապետության ընդարձակում։

Բանվոր դասակարգի տնտեսական կացությունը։ Բանվորական արիստոկրատիայի մենաշնորհյալ դիրքը։



Անգլիական տրեդ-յունիոնիզմը վոր պետպրոլետարիատի վերնախավային մասի կազմակերպություն։

Տրեդ-յունիոնների կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը. Նրանց վերաբերմունքը քաղաքական պայքարի հանդեպ։ Անգլիական պրոլետարիատի դրության վատացումը և առաջընթաց քայլեր XX դարի բանվորական շարժման մեջ։ Տրեդ-յունիոնիզմը և ռուսական «էկոնոմիզմը»։

Սոցիալիզմի զարգացման թուլությունն Անգլիայում։ Բանվորական կուսակցության կազմակերպումը և նրա քաղաքականությունը։ Դասակարգային կռիվ սրումը պատերազմից առաջ։

## VI ԹԵՄԱ

### ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Գերմանիայի տնտեսական վերելքը և նրա պատճառները։ Բանկերը և արդյունաբերությունը։ Գաղութային իմպերիայի կազմությունը։ Դասակարգային հարաբերությունների էվոլյուցիան Գերմանիայում։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և մասսայական պրոֆշարժման զարգացումը։ Կուսակցության զարգացման գլխավոր էտապները և հոսանքների պայքարը։ «Բացառիկ օրենքների» ժամանակաշրջանը։ Էրֆուրտի ծրագիրը և նրա էնգելսյան քննադատությունը։ Ռեվիզիոնիզմի հանդես գալը, նրա սոցիալական արմատները։ Կենտրոնի և ձախ թևի տարաձայնությունները։ 1905 թ. ռուսական հեղափոխությունը և գերմանական սոցիալ-դեմոկրատիան։ Ոպպորտյու-

նիզմի ուժեղացումը սոցիալ-դեմոկրատիայում և նրա պատճառները — ուղեկիցների դերը, բանվորական արիստոկրատիան, պրոֆմիութենական և կուսակցական բյուրոկրատիան: Նախապատերազմյան շրջանի հիմնական տարաձայնությունները:

## VII ԹԵՄԱ

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ֆրանսիայի տնտեսական զարգացման առանձնահատկությունները իմպերիալիզմի դարաշրջանում: Արդյունաբերական զարգացման դանդաղ տեմպը և դրա պատճառները: Կապիտալների արտահանության գերազանցապես «վաշխառուական» բնույթը: Մանր բուրժուազիայի տնտեսական և քաղաքական դերը: Ֆրանսիայի քաղաքական եվոլյուցիան: «Ձախ բլոկի» դերը:

Մարքսիզմի պայքարը բանվոր դասակարգի մեջ գերիշխանություն ձեռք բերելու համար: «Բանվորական կուսակցության» (գեդիստների) կազմակերպումը, նրա ծրագրի և տակտիկայի հեղափոխական-մարքսիստական բնույթը: Պարլամենտական հաջողությունները և օպորտունիզմի զարգացումը: Կառավարության մեջ մասնակցելու և «ձախ բլոկի» հանդեպ ինչպիսի դիրք ունենալու հարցերի շուրջ ստեղծված հոսանքների պայքարը: Օպորտունիստների գերակշռությունը միացյալ կուսակցության մեջ: Ֆրանսիական օպորտունիզմի արմատները:

Սինդիկալիզմը, նրա իդեոլոգիան և տակտիկան:



Սինդիկալիզմի արմատները ֆրանսիական բանվորական շարժման մեջ: Սինդիկալիստական թեքումը և բանվորական օպոզիցիան» Համկոմկուսում:

## VIII ԹԵՄԱ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՊՈԽԱՅՈՒՄ

Միացյալ Նահանգների տնտեսական ծաղկումը քաղաքացիական կռվից հետո և դրա պատճառները: Կապիտալիզմի՝ գյուղատնտեսության մեջ զարգանալու «ամերիկական» ուղու առավելությունները (Լենին): Ամերիկական արդյունաբերության և բանկերի մոնոպոլիզացիան: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության հիմնական ետապները — ամերիկական ցամաքի հպատակեցումը, պայքար՝ Հեռավոր Արևելքի համար: Միացյալ Նահանգների քաղաքական կարգը: Քաղաքական կուսակցությունների նշանակությունը:

Բանվորական շարժումը Միացյալ Նահանգներում: Սոցիալական և ազգային միջնախավերը պրոլետարիատի մեջ: Սոցիալիզմի թուլությունը և դրա պատճառները: Արհեստակցական շարժումը և «հոմպերսիզմի» գերակշռությունն այնտեղ: Պրոֆբյուրոկրատիայի դերն ու գործունեությունը: Բանվոր դասակարգը և քաղաքական պայքարը Միացյալ Նահանգներում: Սոցիալիզմի զարգացումը և տակտիկական վեճերը: Սոցիալիստական կուսակցության վերաբերմունքը պրոֆմիությունների հանդեպ: Պայքար՝ նոր

տրեդ-յունիոններ» ստեղծելու համար։ «Արդյունաբերական աշխատավորները»—կազմակերպության նախնական հաջողությունները և անկումը։

## IX ԹԵՄԱ

## II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՅԵՎ 1914—1918 Թ. Թ. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

*II Ինտերնացիոնալի կազմակերպումը։ Հոսանքների պայքարը II Ինտերնացիոնալում («Միլյերանի դեպքը», գաղութային քաղաքականությունը, պրոֆմիությունները և կուսակցությունը, կոոպերացիան և այլն)։ Պատերազմի հարցը II Ինտերնացիոնալում—պաշտպանողական և հարձակողական պատերազմների թեորիան։ Շտուտգարտի և Բազելի կոնգրեսները։ Կենտրոնի և ձախ թևի բռնած դիրքերը։ Բոլշևիկները II Ինտերնացիոնալում։*

*Իմպերիալիստական հակասությունների սրումը։ Պատերազմի նախապատրաստությունը իմպերիալիստական յերկու կոալիցիաների կողմից (XX դարի «փոքրիկ» պատերազմները—ռուս-յապոնական, բալկանյան, թյուրք-իտալական)։ Համաշխարհային պատերազմի սկիզբը։*

*II Ինտերնացիոնալի կրախը և յերեք հոսանքների կազմությունը միջազգային սոցիալիզմի մեջ։ Սոցիալ-շովինիզմը վորպես նախապատերազմյան օպպորտյունիզմի ավարտում։ Իմպերիալիստական պատերազմին աջակցելը և սոցիալ-դեմոկրատիան «բուրժուական բանվորական կուսակցության» վերածելը (Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում և այլն)։*



*«Կենտրոնի» անձնատվությունը սոցիալ-շովինիստների առաջ։ Կաուցկիականությունը պատերազմի տարիներին։ Բոլշևիկների բռնած դիրքը։*

*Ինտերնացիոնալի վերստեղծման փորձերը։ «Ցիմմերվալդյան ձախի» պայքարը սոցիալ-պացիֆիզմի դեմ։ Ցիմմերվալդն ու Կինտալը վորպես դեպի Կոմինտերնը տանող ուղիի էտապներ։*

---

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

## X ԹԵՄԱ

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

*Համաշխարհային տնտեսության վիճակը պատերազմից հետո։ Վերսալի խաղաղության դաշնագիրը։ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը։ Նոյեմբերյան հեղափոխությունը Գերմանիայում։ Հաջորդ տարիների հեղափոխական շարժումը Գերմանիայում (1919—1921 թ)։ 1918 թ. բանվորական հեղափոխությունը Ֆինլանդիայում։ Հունգարական և բավարական խորհրդային հանրապետությունները։ Գործարանների գրավումն Իտալիայում։ Հետպատերազմյան բանվորական շարժումն Անգլիայում և Ֆրանսիայում։ Առաջին հեղափոխական ալիքի անկումը։ Սոցիալ-դեմոկրատիայի հակահեղափոխական դերը և II Ինտեր-*

նացիոնալը։ Բուրժուական ռեակցիայի հաղթանակը։ Ֆաշիզմն Իտալիայում։

## XI ԹԵՄԱ

## II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

*Սոցիալ-շովինիստները վորպես իրենց յերկրի բուրժուազիայի ներկայացուցիչներ (պատերազմի համար «մեղավոր լինելու», Վերսալի պայմանագրի, ռեպարացիաների հարցերը)։ Ռեվիզիոնիզմի հաղթանակը Թեորիայում և պրակտիկայում։ Սոցիալ-դեմոկրատները բուրժուական պետության՝ իբրև «արտադասակարգային» պետության մասին։ Պրոլետարական հեղափոխությունից և պրոլետարիատի դիկտատուրայից հրաժարվելը։ Կոալիցիա բուրժուազիայի հետ, վորի իսկական նշանակությունն է՝ սքողել բուրժուական քաղաքականությունը։ II Ինտերնացիոնալը և իմպերիալիստական քաղաքականությունը—իմպերիալիզմի պաճուճումը, Ազգերի Լիգային աջակցելը, պատերազմի վտանգի բացասումը, պայքար ԽՍՀՄ դեմ։ Վերաբերմունքը ազգային-գաղութային ազատագրական շարժումների հանդեպ։ Սոցիալ-դեմոկրատիայի կենսունակության արմատները և պրոլետարիատի մեծամասնությունն իր ազդեցության տակ պահել կարողանալու պատճառները։*

*Ցենտրիստական շարժումն Ինտերնացիոնալում։ Ցենտրիստները Յեվրոպայի հեղափոխության վերելքի դարաշրջանում։ $2^1/_2$ Ինտերնացիոնալի կազմակերպումը, նրա իդեական հիմունքները (պրոլետարիատի դիկտատուրայի մասնակի ընդունումը, ԽՍՀՄ-ին*



*աջակցելու խոստում)։ Ցենտրիզմի գործոն դերը (պրոլետարական հեղափոխության նպաստելը)։ Հեղափոխական ալիքի անկումը և ցենտրիստների մուտքը 2-րդ Ինտերնացիոնալի մեջ։ Ժամանակակից «ձախը» սոցիալ-դեմոկրատիայի մեջ և նրա դերը։ Վիեննայի ապստամբությունը և նրա դասերը։*

## XII ԹԵՄԱ

## ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

*Կոմինտերնի կազմակերպումը. 1-ին կոնգրեսը։ Կոմինտերնի իդեական և տակտիկական հիմունքները։ Բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարական դիկտատուրայի հարցերը։ Ագրարային հարցը և Լենինի Թեզիսները կոմկուսակցության՝ գյուղացիության զանազան շերտերի հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին։ Կոմինտերնը և ազգային, գաղութային հարցը։ Պարլամենտարիզմի, պրոֆմիությունների և բանվորական կուսակցության մեջ մտնելու հարցերը Կոմինտերնի 2-րդ Կոնգրեսում։*

*Կոմինտերնի կազմակերպչական սկզբունքները, նրանց տարբերությունը 2-րդ Ինտերնացիոնալի սկզբունքներից։ Կոմինտերնի բանաձևը կուսակցության դերի մասին։ Կոմինտերնի ազդեցության աճումը, բանվորական մասսաների ձգումը դեպի Կոմինտերն և ցենտրիստական առաջնորդների տակտիկան։ 21 պայմանները վորպես պատվար ոպպորտյունիստների Թափանցման դեմ։*

*Կոմինտերնի 3-րդ Կոնգրեսը և պայքարը՝ մասսաներ գրավելու համար։ Յեվրոպայի և Ամերիկայի*

տնտեսական դրությունը 1921 թվից հետո: Կապիտալիզմի կայունացումը և նրա հարաբերականությունը: Միասնական ճակատի տակտիկա: Համ Կ (բ) Կ Անգլո-Ռուսական Կոմիտեյում անցկացրած տակտիկան վորպես միասնական ճակատի տակտիկայի ճիշտ կիրառման օրինակ: Կոնգրեսը միասնական ճակատի հիմնական խնդրի—ցածից միասնականության—մասին: Բանվորական և բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգը: Մասսաներ ձեռք բերելու պայքարը պրոֆմիությունների մեջ, բուրժուական պարլամենտի օգտագործումը: Հեղափոխական շարժման վերելքը Գերմանիայում 1923 թ. և գերմանական պրոլետարիատի պարտությունը:

## XIII ԹԵՄԱ

## ԿՈՄԻՆՏԵՐՆ

(Շարունակություն)

Հետպատերազմյան համաշխարհային կապիտալիզմի զարգացման յերեք շրջանները. բնութագրել ներկա շրջանը վորպես մի շրջան, ուր զարգանում ե կապիտալիստական տեխնիկան և ուժեղանում պետական կապիտալիզմին ձգտելու տենդենցը, և դրա հետ մեկտեղ վիթխարի չափերով սրվում են իմպերիալիզմի միջազգային և ներքին հակասությունները:

ԿԻԳԿ IX պլենումը և Կոմինտերնի VI Կոնգրեսը Կոմինտերնի՝ նոր իրադրության մեջ ունենալիք տակտիկայի մասին—սրել սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարը, միասնական ճակատ կազմել ցածից. կոմկուսակցությունների խնդիրները և տակտիկան



պրոֆմիութենական աշխատանքի ասպարեզում, անգլիական և ֆրանսիական կոմկուսակցությունների նոր տակտիկան:

XI Կոնգրեսի վորոշումները պատերազմի վտանգի և կոմկուսակցությունների խնդիրների մասին՝ ԽՍՀՄ դեմ ուղղված պատերազմի նախապատրաստությունների առթիվ:

VI Կոնգրեսի թեզիսները գաղութների ու կիսագաղութների հեղափոխական շարժման և ԽՍՀՄ ու Համ Կ (բ) Կ դրության մասին: Կոմինտերնի ծրագրի հիմնական գծերը (կապիտալիզմի ճգնաժամը. անցման շրջանը: Յերեք տիպի յերկիր՝ պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ: Գաղութների դերը համաշխարհային հեղափոխության գործում: Կոմինտերնի ստրատեգիան և տակտիկան. մասսաներ նվաճելու մեթոդները. բանվորական և հեղափոխական շարժման զանազան ռեֆորմիստական իդեոլոգիաների գնահատանքը: «Սոցիալիստական» ռեֆորմիզմը վորպես բանվորական շարժման գլխավոր թշնամին): Կոմինտերնը աջ և ձախ թեքումների դեմ մղած պայքարում: Միասնական ճակատի տակտիկայի խեղաթյուրումը: Աջ թեքումները—ռադեկ-բրանդլերյան սխալները Գերմանիայում 1923 թ.: Ձախ թեքումները—անտիպարլամենտարիզմ (Բորդիգա), պրոֆմիությունների մեջ կատարելիք աշխատանքի ժխտումը (Գերմանիա), մասսաների նվաճման համար պայքարելուց հրաժարվելը, կայունացման ժխտումը, Համ Կ (բ) Կ տնտեսական քաղաքականությունը սխալ հասկացած լինելը: Արևմուտքի «ձախերի» և Համ Կ (բ) Կ տրոցկիստական օպոզիցիայի հայացքների նույնությունը, այդ

4964
41
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Библиоте

հայացքների աջ եյությունը: Աջ (Սուվարին) ու ձախ ռենեգատների և տրոցկիստական օպոզիցիայի բլոկը Կոմինտերնի լենինյան գծի դեմ: ԿԻԳԿ IX պլենումը և Կոմինտերնի 6-րդ Կոնգրեսը նախկին տրոցկիստական օպոզիցիայի մասին. տրոցկիստական հայացքների և Կոմինտերնի պատկանելության անհամատեղելիությունը, պայքար տրոցկիզմի, իբրև միջազգային սոցիալ-դեմոկրատիայի այլաձևության դեմ: Աջ թեքման վտանգը ներկուսակցական գլխավոր վտանգն է կապիտալիզմի կայունացման շրջանում: Աջ թեքումները Կոմինտերնի սեկցիաներում 6-րդ Կոնգրեսից հետո:

Կոմինտերնի պայքարը աջ և ձախ թեքումների դեմ՝ որպես կոմկուսակցությունների բոլշևիկացման և Կոմինտերնի 6-րդ Կոնգրեսի կողմից նշված լենինյան գծի անցկացման անհրաժեշտ պայման:

---

# ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

## XIV ԹԵՄԱ

## ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

*Անգլիայի՝ Հնդկաստանում վարած քաղաքականության էտապները: Հնդկաստանի ժամանակակից տնտեսական և քաղաքական կացությունը: Ագրարային հարցը և գյուղացիության վիճակը: Բանվոր դասակարգի դրությունը: Հնդկաստանի ինդուստրիացման հարցերը: «Դեկոլոնիզացիայի» թեորիան: Հեղափոխական շարժման վերելքը Հնդկաստանում՝ պատերազմից հետո—ագրարային շարժման աճումը. գործադուլային պայքարը: Բանվորական շարժման անկայունությունը: Ժամանակավոր պարտության պատճառները: Մասսայական շարժումից վախեցող բուրժուազիայի դավաճանությունը: Գանդիզմ: Ազգային բուրժուազիայի և իմպերիալիզմի կոմպրոմիսը: Բանվորական շարժման հեռանկարները Հնդկաստանում:*



## XV ԹԵՄԱ

## ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

*Չինական հեղափոխության նախադրյալները: Չինաստանի տնտեսական հանրակազմերը: Գյուղացիության և բանվոր դասակարգի դրությունը: Ագրարային հարաբերությունները և ֆեոդալիզմի մնացորդների հարցը: Չինաստանի ազգային ազատագրական շարժումը մինչև պատերազմը և 1911 թ. հեղափոխությունը: Եկոնոմիկայի փոփոխությունը իբրև համաշխարհային պատերազմի արդյունք: Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը Չինաստանի հեղափոխական շարժման վրա:*

*Չինական հեղափոխության շարժիչ ուժերը: Ընդհանուր ազգային ճակատ իմպերիալիզմի դեմ (Հյուսիսային արշավանքը): Միասնական ազգային ճակատի պառակտումը: Բուրժուազիայի հետ քաշվելը, Չան-Կայ-Շիի դավաճանությունը: Գոմինդանը և նրա սո-*

ցիալ-դասակարգային հիմքը։ Բանվորական և գյուղացիական շարժման աճումը։ Ուխանի դավաճանությունը և Գոմինդանի պառակտումը։

Կոմկուսակցության տակտիկան։ Կոմկուսակցության տակտիկան Գոմինդանի նկատմամբ։ Ոպպոզիցիայի սխալները՝ հեղափոխության առաջին էտապում Գոմինդանից դուրս գալու մասին։ Խորհուրդների կազմակերպման հարցը և ոպպոզիցիայի վոստոստումները հեղափոխության զանցկացած էտապների վրա։ Կանտոնի 1927 թ. կոմմունան և նրա դասերը։ Չինական կոմկուսակցության հետագա խնդիրները, ծավալվող բանվորական և գյուղացիական շարժումների ղեկավարությունը։

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Անվան
Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0403200